Արձանագրություն N 5
«ՏԿՏՏՆ-ԲՄԱՇՁԲ-2019/1Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«19» ապրիլի 2019թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը, Ա. Պապյանը, Լ. Հարությունյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը
Բացակայում է՝ Լ. Ոսկանյանը

1. բաց մրցույթ ընթացակարգի ստացված փաստաթղթերի մասին

(Կ. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է հարցման եզրակացությունը, համաձայն որի՝ <<Նուռ>> ՍՊԸ-ի մասով ՀՀ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում նման ՀՎՀՀ-ով հարկ վճարող գրանցված չէ:

2. <<Նուռ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի), դրա հաշիվ ապրանքագրերի, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունների պատճենները, սակայն թիվ 5.1 հավելվածով ինչպես նաև հրավերով նախատեսված<<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանելու և գնահատելու կարգի աղյուսակի 4-րդ սյունակով պահանջվող թվով մեկ էքսկավատորի (VOLVO BL61B, 02 YE 3721 RUS, 2012) շերեփի տարողունակությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Ինչպես նաև հրավերով նախատեսված <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանելու և գնահատելու կարգի աղյուսակի 9-րդ սյունակով պահանջվող թվով երկու հատ գլդոնների (6-8տ) տիպերը և դրանցից մեկի կոնստրուկցիոն քաշը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու պահանջի մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով հրավերի 8.20 կետը ծանուցել մասնակցին և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Scanned by CamScanner

2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

_____ Լ. Հարությունյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner